Տ. ԿԻՐԱԿՈՍ ԱԲՂ. ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1812 թ. Բեսարաբիան միացավ Ռուսաստանին: Կեցության համար նպաստավոր պայմանները խթանեցին, որ ավելանա ոչ միայն հայերի, այլ նաեւ հայկական եկեղեցիների թիվը: Ռուսական կայսրության տարածքում ձեւավորվեց երկրորդ թեմը՝ Բեսարաբիան՝ միավորելով Բեսարաբիայի, Մոլդովայի, Ղրիմի, ռուսական կայսրության հարավային շրջանների, Մոսկվայի ու Սանկտ Պետերբուրգի ծխերը: Թեմի առաջնորդարանը գտնվում էր Քիշինյովի Ս. Աստվածածին եկեղեցում: Առաջին թեմական առաջնորդն էր Տեր Գրիգոր արք. Զաքարյանը (1812-1827 թթ.): 1813 թ. Գրիգոր Սրբազանը դիմեց կառավարությանը՝ խնդրելով թեմին փոխանցել Նախիջեւանի, Գրիգորիոպոլի եւ Ղրիմի հոգեւոր համայնքները՝ այն պատճառաբանությամբ, թե ծուխը բազմամարդ է, իսկ Աստրախանն առաջնորդարանից շատ հեռու է գտնվում: Նախարարների կոմիտեն, քննելով հավատացյալների խնդրանքը, ինչպես նաեւ պաշտոնական միջնորդությունը, չբավարարեց այն[1]:

1829 թ. Բեսարաբիայի թեմը, թեմական առաջնորդ Տեր Ներսես արք. Աշտարակեցու (1828-1843 թթ.) միջնորդությամբ, վերակազմավորվեց որպես Նախիջեւանի-Բեսարաբիայի թեմ[2]՝ միավորելով արեւմտյան եւ հարավարեւմտյան Ռուսաստանի, Նոր Նախիջեւանի, Ղրիմի, Բեսարաբիայի ծխերը: 1836 թ. մարտի 11-ին «Ռուսաստանի Հայ-Գրիգորյան եկեղեցու գործերի կառավարման մասին» որոշման համաձայն՝ եկեղեցու ղեկավարումն ու հոգեւորականների նկատմամբ հսկողությունը հանձնվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայ-Գրիգորյան սինոդին: Ռուսաստանի տարածքում հայկական եկեղեցիները բաժանված էին վեց թեմի միջեւ՝

[1] НАА, ф. 139, оп. 1, д. 281, л. 6-7.
[2] НАА, ф. 57, оп. 1, д. 65, л. 4.

ա. Նախիջեւանի-Բեսարաբիայի,
բ. Աստրախանի,
գ. Էրիվանի,
դ. Վրաց,
ե. Ղարաբաղի,
զ. Շիրվանի[3]:

Ներսես Աշտարակեցու գործունեության շնորհիվ՝ թեմի եկամուտն ավելացավ, կառուցվեցին նոր եկեղեցիներ, բացվեցին ծխական դպրոցներ: ԺԹ. դարի երկրորդ կեսին եւ Ի. դարասկզբին թեմն աշխույժ գործունեություն է ծավալում: Բացառիկ արդյունաշատ գործունեությամբ հիշատակվում է թեմակալ առաջնորդ Տեր Գաբրիել արք. Այվազովսկին[4]: Նրա ջանքերով 1858 թ. Նախիջեւանի-Բեսարաբիայի կոնսիստորիան տեղափոխվեց Թեոդոսիա[5], իսկ Քիշինեւում պահպանվեց միայն հոգեւոր կառավարումը: 1879 թ. Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի միջնորդությամբ՝ Ալեքսանդր Բ. կայսրը հրամայեց թեմական կոնսիստորիան տեղափոխել Թեոդոսիայից Քիշինեւ, որտեղ եւ գտնվում էր Հայ-Գրիգորյան թեմի առաջնորդի նստավայրը[6]: 1895-ին թեմի կենտրոնը Քիշինեւից տեղափոխվեց Նոր Նախիջեւան:

Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայկական թեմերը վարչատարածքային փոփոխությունների ենթարկվեցին եւ վերանվանվեցին այլ կերպ:

1918 թ. Ռումինիան գրավեց Բեսարաբիայի տարածքը եւ թեմական կոնսիստորիան, որը գտնվում էր Քիշինեւում, Նոր Նախիջեւանի հոգեւոր կառավարման հետ այլեւս չկարողացավ կապ հաստատել: 1920 թ. սեպտեմբերի 29-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցի կոնդակով կազմավորվեց Ռումինիա-Բեսարաբիայի հայկական թեմը[7]: Այդ նույն օրը Կաթողիկոսի երկրորդ կոնդակով կազմավորվեց Նոր Նախիջեւանի հայկական թեմը՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Տ. Մուշե վրդ. Դանագեզյանի[8]: Թեմի իշխանության տակ էին Բախմուտայի, Վորոնեժի, Մեծ Սալի, Գրիգորիոպոլիայի, Եվպատորիայի, Կարասուբազարի, Կերչի, Կիեւի[9], Լենինգրադի, Փոքր Սալի, Մելիտոպոլիայի, Մոսկվայի, Նեսվիժայայի, Նոգայսկայի, Նոր Նախիջեւանի, Օդեսայի, Օրաբազարայի, Սլովյանսկի, Հին Ղրիմի (Սուրբ Խաչ),

[3] НАА, ф. 57, оп. 1, д. 84, л. 39-97.
[4] НАА, ф. 139, оп. 1, д. 1593, л. 76-77, ф. 56, оп. 1, д. 3631, л. 1.
[5] НАА, ф. 329, оп. 1, д. 51, л. 2.
[6] НАА, ф. 56, оп. 1, д. 7070, л. 1.
[7] НАА, ф. 57, оп. 2, д. 521, л. 117.
[8] 1922 թ. Տ. Մուշե վրդ. Դանագեզյանը ձեռնադրվեց եպիսկոպոս (НАА, ф. 57, оп. 3, д. 448, л. 8).
[9] 1924 թ. Բախմուտայում, Վորոնեժում, Կիևում եկեղեցիները չէին գործում:

Տոգանրոգի, Տոպտիի, Թեոդեսիայի, Խարկովի (եկեղեցին մի քանի անգամ տեղափոխվել է մի թեմից մյուսը, իսկ 1922 թ. հուլիսի 6-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով մտել է Նոր Նախիջեւանի թեմի կազմի մեջ)[10], Զալտիրի, Յուզովկի, Յալտայի[11] գործող եկեղեցիները: 1925 թ. թեմում գործում էր եկեղեցական 35 կառույց, ծիսական արարողությունները կատարում էր 43 քահանա[12]:

1924 թ. փետրվարի 27-ին Տ. Մուշե եպս. Դանագեզյանի մահից[13] մեկ տարի անց, Նոր Նախիջեւանի թեմի թեմական խորհուրդը (անդամներ՝ Տ. Ռուբեն ավ. քհն. Բեկգուլյան, Տ. Կարապետ ավ. քհն. Եկիմյան, Տ. Խաչատուր քհն. Բալյան, Տ. Անդրեաս քհն. Սակտիկյան, Տ. Գեւորգ քհն. Շիլտյան) առաջնորդ է ընտրում Տեր Գարեգին եպս. Հովսեփյանին[14]: Նշանակումը, սակայն, եղավ միայն 1927 թ. փետրվարի 28-ին[15]: 1924-ից մինչեւ 1927 թ. հունվար ամիսը թեմի փոխառաջնորդն էր Տ. Պողոս ավ. քհն. Բեդիլյանը[16]:

Շուտով Տեր Գարեգին եպս. Հովսեփյանը նշանակվում է Հայոց կաթողիկոսության ներկայացուցիչ Եվրոպայում, եւ 1934 թ. հոկտեմբերի 3-ի Հայրապետական կոնդակով թեմի փոխառաջնորդ է նշանակվում Տ. Մկրտիչ ավ. քհն. Տեր-Հակոբյանը:

1946-ի մայիսին ընտրվում է թեմական նոր խորհուրդ՝ գլխավորությամբ Տ. Մկտրիչ քհն. Զոպուտյանի[17]: Նրան փոխարինած թեմական առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսը 1947 թ. հունիսի 2-ին զեկուցում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցին, որ թեմում գործում է 5 եկեղեցի՝ Նոր Նախիջեւանում (2 եկեղեցի), ինչպես նաեւ Մեծ Սալում, Տոպտիում, Զալտիր գյուղերում[18]:

1950-ականների սկզբին առաջ քաշվեց գործող երկու թեմերի՝ Նոր Նախիջեւանի եւ Աստրախանի միավորման հարցը:

1947 թ. դեկտեմբերի 30-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Զ. Չորեքչյանի կոնդակով հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդին են տրվում նաեւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդի լիազորությունները[19]: 1949 թ. հունիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Բարձրագույն

[10] ՀԱԱ, ֆ. 56, оп. 3, д. 352, л. 3.
[11] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3044, л. 2-5.
[12] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3041, л. 11.
[13] Տ. Մուշե եպս. Դանագեզյանը մահացել է 1923 թ. փետրվարի 20-ին:
[14] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3038, л. 1 и об.
[15] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3052, л. 11-12.
[16] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3047, л. 21.
[17] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3101, л. 40.
[18] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3103, л. 25.
[19] ՀԱԱ, ֆ. 409, оп. 1, д. 3103, л. 82 и об.

հոգեւոր խորհուրդը Տ. Կարապետ վրդ. Ասլամազյանին[20] նշանակում է այդ միացյալ թեմի առաջնորդ[21]: Այդ ժամանակ թեմն ուներ 11 եկեղեցի, որտեղ ծառայում էր 11 քահանա[22]: 1951 թ. ապրիլի 1-ին թեմակալ առաջնորդ է նշանակվում Տ. Սուրեն եպս. Թորոսյանը[23]:

1956 թ. մայիսի 5-ին Մոսկվայում վերաբացվում է գերեզմանատան տարածքում գտնվող միակ պահպանված՝Ս. Հարություն եկեղեցին, որը դառնում է Մոսկվայի առաջին ծուխի կենտրոնը:

1964 թ. մարտի 19-ին Մայր Աթոռի Գերագույն խորհրդի որոշմամբ՝ «Հյուսիսային Կովկասի եւ Նախիջեւանի» թեմը վերակազմավորվեց «Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի» թեմի: Թեմի կենտրոնը Ռոստովից տեղափոխվեց Մոսկվա: Թեմը միավորում էր Մոսկվայի, Չալտիրի, Արմավիրի, Պրիկումսկեի, Կիզլյարեի, Օրջոնիկիձեի եկեղեցիները: Թեմակալ առաջնորդ նշանակվեց Տ. Պարգեւ եպս. Գեւորգյանը[24]:

1964 թ. ապրիլի 2-ին Խորհրդային Հայաստանի նախարարների խորհրդին կից գործող՝ Հայ Եկեղեցու հարցերի խորհուրդը նամակով դիմեց ԽՍՀՄ նախարարների խորհրդին կից գործող Կրոնական պաշտամունքների խորհրդին՝ թեմերի վերակազմավորման խնդրով: 1964 թ. մայիսի 22-ին Կրոնական պաշտամունքների խորհրդի նիստում հավանության արժանացավ Հյուսիսային Կովկասի եւ Նախիջեւանի թեմը Ռուսաստանի ու Նոր Նախիջեւանի թեմի վերակազմավորելու որոշումը[25]:

РЕЗЮМЕ

В статье “ История Новонахичеванской и Российской епархии Армянской Апостольской церкви по документам, хранящимся в Национальном архиве Армении” представлены история и обстоятельства организации епархии. На основе документов, хранящихся в Национальном архиве Армении, показана история формирования в 1812 г. Бессарабской епархии. Согласно сохранившимся сведениям, в 1829 г. Бессарабская епархия, при посредничестве предстоятеля архиепископа Нерсеса Аштаракеци (1828-1843) была преобразована в Нахичеванско-Бессарабскую епархию. Во

[20] 1951 թ. մարտի 7-ին ազատվել է պաշտոնից, իսկ դեկտեմբերի 27-ին կարգալույծ է արվել (НАА, ф. 409, оп. 1, д. 3110, л. 66):
[21] НАА, ф. 409, оп. 1, д. 2978, л. 6.
[22] НАА, ф. 409, оп. 1, д. 3083, л. 1.
[23] НАА, ф. 409, оп. 1, д. 3109, л. 27.
[24] НАА, ф. 823, оп. 1, д. 254, л. 10.
[25] НАА, ф. 823, оп. 1, д. 254, л. 18.

второй половине XIX - начале XX в. в епархии была развернута плодотворная деятельность - возводились новые церкви, открывались приходские школы.

В статье на основе фактических сведений показано, как после установления в России советского строя переименовывались и подвергались административно-территориальным изменениям армянские епархии. Приводятся сведения об организации Румынско-Бессарабской и Ново-Нахичеванской епархий ААЦ.

SUMMARY

The article entitled "History of the Armenian Diocese of Russia and New Nakhijevan according to documents preserved in the national archives of Armenia" presents the history of foundation and circumstances of formation of the above-mentioned diocese. On the basis of the documents preserved in the national archives of Armenia it describes how the diocese of Bessarabia was formed in 1812. According to the information preserved, in 1829 the diocese of Bessarabia, with the mediation of Archbishop Nerses of Ashtarak (1828-1843), Primate of the Diocese, was re-established as a diocese of Nakhijevan-Bessarabia. In the second half of the 19th century and at the beginning of the 20th century, the diocese had a dynamical activity: new churches were built, parish schools were inaugurated.

The article, on the basis of factual information, also presents how Armenian dioceses in Russia, after the establishment of the soviet regime, underwent administrative and name changes. There is also information on the formation of the Armenian dioceses of Romania-Bessarabia and New Nakhijevan.